

Աշխարհում ամենաքաղցր բառը տատիկն է : Աշխարհում չկա մի այնպիսի երեխա , ով չգնահատի տատիկի գործն ու դերը իր կյանքում : Ես սիրում եմ իմ տատիկին` իր բոլոր լավ և վատ բնավորության գծերով հանդերձ : Ես նրանից շատ բան եմ սովորել : Սովորել եմ լինել ազնիվ, բարի , օգնել այն մարդկանց, ովքեր իմ օգնության կարիքն ունեն : Գնահատել այն, ինչ ինձ տրված է Աստծու կողմից : Դրա համար ես ամեն օր շնորհակալություն եմ հայտնում Աստծուն այն ամենի համար, ինչ ունեմ և այն ամենի համար , ինչ կարողանում եմ անել : Ես կյանքիցս էլ շատ եմ սիրում ու պաշտում իմ տատիկին : Նա ինձ համար իսկական աստվածուհու մարմնավորում է : Նա ինձ համար շատ բան է արել , դրա համար ես նրան սիրում եմ ամբողջ հոգով ու մարմնով : Երբ փոքր էի , նա ինձ համար կարդում էր հեքիաթներ , կազմակերպում խաղեր : Ինչպես այն ժամանակ , այնպես էլ հիմա նա իմ ամեն օրը տոն է դարձնում : Ես մեծ սիրով ու հարգանքով եմ հետևում իմ տատիկի խորհուրդներին , քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի մեծ իմաստ : Հարգե՛ք ձեր տատիկներին , քանի որ նրանք մեծ դեր ունեն մեր կյանքում :

Սիրում եմ քեզ , ի՛մ տատիկ :

Նաթելա Սաֆարյան